



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-12-Ո-14
2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ՎԱԴԻՆԱԿ ԿԱՐԼԵՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐ ԴԻՄՈՒՄԻ ՀԱՄԱՉԱՅՆ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

նախագահությամբ՝

Ա. Մկրտումյանի

մասնակցությամբ ԱԽ անդամներ՝

*Ա. Բաբայանի, Ա. Խաչատրյանի,
Ռ. Բարսեղյանի, Գ. Ղազինյանի,
Գ. Խանդանյանի, Մ. Հարթենյանի,
Ե. Մողմունյանի, Վ. Ստեփանյանի,
Հ. Փանոսյանի, Ս. Օհանյանի*

քարտուղարությամբ՝

Շ. Վարդանյանի

2017 թվականի սեպտեմբերի 15-ին քաղաք Երևանում՝ Արդարադատության խորհրդի նիստում, քննարկելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վաղինակ Կարլենի Մկրտչյանի լիազորություններն իր դիմումի համաձայն դադարեցնելու վերաբերյալ հարցը, և ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 95-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասով, 4-րդ մասի 1-ին կետով և 5-րդ մասով,

Ո Ր Ո Շ Ե Ց

Առաջարկել Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավոր Վաղինակ Կարլենի Մկրտչյանի լիազորությունները՝ իր դիմումի համաձայն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ա. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ